

Ամերիասթրիմ Օնլայն/Մոբայլ բանկինգ




Ինչպե՞ս իրականացնել Ամերիասթրիմ փոխանցում Ամերիա Օնլայն/Մոբայլ բանկինգ համակարգի միջոցով

Գործարքն իրականացնելու համար անհրաժեշտ է.


- Մուտք գործել Ամերիա Օնլայն/Մոբայլ բանկինգ համակարգ **«Վճարումներ և** փոխանցումներ» բաժին, ընտրել **«Ամերիասթրիմ»** փոխանցման տեսակը։
- 2 Լրացնել անհրաժեշտ տվյալները.





- **Յաշիվ**. ընտրվում է հաճախորդի գործող հաշիվների ցանկից
- Ստացողի հեռախոսահամար. ստացողի հեռախոսահամարն է, որը պետք է լրացված լինի միջազգային ֆորմատով (+374XXXXXXX)։
- Կանխիկացվող գումար. գումարը պետք է լինի հազարապատիկ, սահմանաչափը` 1,000 - 200,000 ֏
- Միջևորդավճար. հաճախորդից գանձվող միջնորդավճար (լրացվում է ավտոմատ).
 - **1%`** դեբետային քարտերից և հաշվարկային հաշվից փոխանցելու դեպքում
 - 2%` կրեդիտային քարտերից փոխանցելու դեպքում
- Ելքագրվող գումար. փոխանցողի հաշվին սառեցված գումարը` ներառյալ միջնորդավճարը (լրացվում է ավտոմատ) ։





- Գործարքը հաստատելուց հետո արտացոլվում են փոխանցման մանրամասները.
 - Կանխիկացման կոդ. անհրաժեշտ է տրամադրել ստացողին՝ գումարը ԱԳՄ-ից կանխիկացնելու համար։
 - 💼 Ստացողի հեռախոսահամարը
 - **Կանխիկացվող գումար**. հաճախորդին կանխիկացման համար փոխանցված գումար
 - Ակտիվ է մինչև. գումարի ստացման առավելագույն ժամկետ (փոխանցումից հետո 48 ժամ), որից հետո կանխիկացում չիրականացնելու դեպքում գումարը ավտոմատ կապասառեցվի փոխանցողի հաշվին` ներառյալ միջնորդավճարը։

! Ստացողին կանխիկացման տվյալներն ուղարկելու համար անհրաժեշտ է սեղմել 🧹 կոճակը (մոբայլ)։



Ինչպե՞ս կարող է հաճախորդը ստանալ փոխանցված գումարը

Գումարը կարելի է ստանալ փոխանցումից անմիջապես հետո՝ Ամերիաբանկի բանկոմատում մուտքագրելով հաղորդագրության մեջ նշված տվյալները.

- 💻 Փոխանցված գումարը
- 💻 Փոխանցողից ստացված 8-անիշ գաղտնաբառը
- 💻 Ստացողի հեռախոսահամարը
- Ստացողի բջջային հեռախոսահամարին ստացված մեկանգամյա օգտագործման քառանիշ կոդը (OTP)

! Բանկային քարտի առկայության անհրաժեշտություն չկա, ստացողը կարող է չլինել Ամերիաբանկի հաճախորդ

Բանկոմատների ցանկին կարող եք ծանոթանալ՝

Այստեղ

Cash Withdrawal. Amount: 1,000.00 AMD, Code: <u>78837390</u>. Active <u>Until</u> <u>27/06/2115:34:49</u>

Read 16:09

